

գործութեան՝ կորովի բազկաց Խանդամի-  
րեան Յովշաննէս իշխանի և արքասիրա-  
ընկերաց նորին, որոց համար Չամչեանն  
կըրէ Աէին ալք զօրաւորք և հաստաբա-  
զուկք,,,: Եյս աւանն ի հնումն շատ մեծ  
և բարգաւած եղած է, և շատ անդամ  
պատմութեան մէջ քաղաք կիոչուի: Եյժ-  
մու բնակիչք գիւղիս բոլորն ալ Ճայք են  
հարիւր տան չափ, որոց կէսն բնիկ, և կէ-  
սըն գաղթական. բնիկ բնակչաց մէջ գրե-  
թէ դեռ կփայլի նախնեաց անվեհիր և քա-  
ջակորով արիութիւնը, անուանի են ձիա-  
վարժութեան և զինակրութեան մէջ, և  
սկնածելի շքակայ բնակչաց մօտ:

Այս գիւղե բուն անունն է՝ Ծահկերտ,  
որ ցոյց կտայ լինել Ծահկ գործ կամ դաս-  
տակերտ, բայց հնութիւնն ցոյց տուած չէ  
սորա սկզբնաւորութիւնն. անունս՝ Ծահ-  
կերտ,, տեղական աւանդութիւնն կմեխնէ  
“Ծահ-գիրդ,, (Ծահեմուտ) ինչպէս պի-  
տի տեսմեմք ստորեւ։ Այժմու սովորական  
կոչումն “Պազանչե,, առնուածէ ի կիրա-  
ռութիւն դրացի բնակչաց մէջ՝ գիւղիսնախ-  
նի բնակչաց արհեստէն, այս ինքն պղնձագոր-  
ծութենէն, որ ժամանակին դլխաւոր և  
կիրթ պարապմունքն էր Ծահկերտցւոց մե-  
ծագոյն մասին։ Այս տեղ՝ ինչպէս կերեի՝  
ամենեին մուտ գործել չէ կարացած լս-  
տինահայ ունիթօռաց ճարտարահնար խո-  
րամանկութիւնն, մինչդեռ մօտակայ գիւ-  
ղօրայքը շատերը դլխովին որսացուել են։  
Ծահկերտի նշանաւոր բազմամարդու-  
թեան և ծաղկեալ դրութեան վկայք են,  
մինչև ցայսօր դեռ նշմարելի աւերակներն  
ջրանդիդ, այգեաց, ջրաղացից և այլն։

Պատմեցին զիւղիս ծերունի բնակիչքը,  
թէ աւախնեաց մեր զիւղումն քառասուն

Երկու ջաղաց ա էլել, ու հաղար հինդ հար-  
իւր տուն բազմութիւնն,՝ Պարսից հարս-  
տահարութիւններէն և անդադար ասպա-  
տակութեանց անթիւ հարուածներէն  
ստիպուած այդքան բազմութիւնը գաղ-  
թել ու փոխուել են զանազան տեղեր,  
ուր աեղ ապահով ասլրելու յոյս ունե-  
ցած են. այժմ Ըուշի քաղաքին մէջ ա-  
ռանձին թաղ և առանձին եկեղեցի կայ  
ու ազանչեցւոց, կոչուած, որոց մէջ կան  
դեռ մինչեւ ցայսօր Խանդամիրեան մեծա-  
նուն տոհմի շառաւիղները: Գլխաւոր  
պարսպմունք այժմու բնակչաց գիւղիս են  
երկրադործութիւնն, այդեզործութիւնն,  
խաշնարածութիւնն, մեղուարուծութիւ-  
նըն, և շերամատածութիւնն. արհեստնե-  
րըն են գարբնութիւն, հիւսնութիւն, ոս-  
տայնանկութիւն, և սափրութիւն. երկրա-  
դործութիւնն ծաղկած է փոքր իշատէ, իսկ  
այդեզործութիւնն՝ գաղթականաց մէջ:  
Բնիկ ժողովրդականաց լեզուն՝ Կախիջե-  
ւանի գաւառական բարբառն է, միայն  
շատ բառերի մէջ կլսուին Աիւնեցի հընչ-  
մունք, և այն մօտ դրացի լինելուն պատ-  
ճառաւ է երեկի:

( ८-५--६-७-८-९ )

զԱՐԵԿԱՆ ԱՆԳՈՒ ԽՈՄ ՄԵՐԱԾԱՅԻ.

Պատահ եմ ի հայրենասիրութիւն  
Խմբագրութեան Վըարատայ, թէ սիրով  
ընկալաւ ի ծոց սորա զստորագրութիւն  
վաղեմնի և զերկանց վէպս մերոց նախ-  
նեաց որք անմահացուցին զանուանս իւր-  
եանց զանազան ազգի ազգի մեծագոր-  
ծութեամբ, զի զիտեմ հայրէնանուելը

Երարատն մայրական սիրով վերընդունի ի  
մարգարտաշար յէջըս իւր ի հրատարա-  
կել զժիշտատակս աղժանայիշտատակ մերոց  
նախնեաց, ոյր սակս հարկեցայ զդիկել:

Ելերինս Գանձակայ թէպէտ գոն բա-  
զում աւեր, և կիսաւեր եկի լիցիք և վա-  
նօրայք և գարաւոր հռչակեալ ուխտա-  
տեղիք և անապատք, բայց՝ յորոց հրո-  
չակաւոր և անուանին է Աբենաստան  
Զարեկայ անուանեալ անապատն, որ է  
կառուցեալ ի ձորամիջի Զարեկայ գետոյն  
ի մէջ անտառախիտ մայրեաց և ի մէջ  
պտղաբեր ծառոց յեզք գետուն Զարեկայ,  
ի վայելուց տեղուջ կառուցեալ ի սկըզ-  
բան եօթնետաներորդ դարունի Դաւիթ  
յԱբքեպիսկոպոսէ Վարիմանեանց, այս-  
պէս զրի ի գիրս Առաքել պատմագրի յե-  
րես 250. “Դաւիթ եպիսկոպոս էր ի  
ու Յամքօռու ձորէն ի ցեղէ յիշխանաց  
ու զոր Վարիմանեանց կոչեն, սա և եկաց  
ու ի մէծ յանապատն, և ապա ելեալ գը-  
նաց ի ձորն Յամքօռայ շինեաց զանա-  
պատ զոր կոչեն Զարեքադետի անապատ,  
որ բաղմաժողով եղբարց բնակութիւն  
ու և յոյժ հաստատուն ամենայն կարգօք  
ու և սահմանաք անապատի մինչև ցայսօր.  
ու և ինքն Դաւիթ եպիսկոպոս անդէն  
ու վախճանեցաւ և անդէն թաղեցաւ,,,:  
Զարեքաման նորա մինչ ցարդ կայ Եկեղեց-  
ւոյ արեւելեան կողմն արտաքուստ հան-  
գէպ Աւագ խորան, երեխ ի վերայ նորա  
մատուռ են շինեալ ըստ վաղմենի սովո-  
րութեան, այժմ վիշեալ և ընդ հողով էր  
Տածկեալ. մեք բացաք զերես տապանա-  
վիմբ որ ել զոյզս տապանաքար, յորոց մի-  
ոյն զրեալ զայս տապանագիր. “Այս է  
ու հանգիստ Դաւիթ եպիսկոպոսի որ փո-

“ Խեցաւ առ Վրիստոս ի թվին Ուզը, Եկեղեցին շնորհալ ի Դաւիթ յԵպիսկոպոսէ է մայր եկեղեցին Զարեքայ անպատճին՝ անհարթ քարամք՝ բաւականին ընդարձակ ի վերայ չորից ստուար քառակուսի սեանց, և սիւնք են նմանապէս մանըր անհարթ քարինք սաստիկ եռացուցեալ կրիւք ընդ միմեանս, ունի երկուս պահարանս, երեք դուռո՞ւ մին արեմտեան՝ յոյժ ընդարձակ, երկուսն փոքր՝ միննի հաքաւ կոյս և միւսն ի հիւսիսային արեմտը տըս, այնպէս նշմարի թէ յետոյ է շնորհալ ունի երկոտասան լուսամուտու երեք ի հարաւկոյս, երեքն ի հիւսիս, երեքն յարեմտը տըս, արդէն խցեալ ի շնորհ զհուշակաւոր և զհրածակերտ գաւիթն առաջն եկեղեցւոյն, երեք լուսամուտ ևս յարելեան կողմըն՝ մին Աւագ խորանին՝ երկուս պահարանաց, շինութիւն տանեաց եկեղեցւոյն սագաշէն համակ թրձեալ աղիւսովքն, ևս ունի մի լուսամուտ ի տանեաց իրրե երդի Ա վեմի սոյն լու սամտիս խոշաձե զբեալ կայ այս ինչ. “ Առւրբ խաչս բարեխաւս Մանուկի Թօ, Աւ, Աւ, Կ.Օ., Տ վերայ այսր եկեղեցւոյ բնաւին նշմարի հետք ինչ արձանագրութեանն, բայց միայն ի տանիս ի վերայ Աւագ խորանին գոյ մի քառակուսի քար իրրե սիւն ցից եղեալ մի կանգնաշափ, որոյ խարիսխն ստուար ի մէջ որմոց տաճարին բոլորաձև, զբեալ կայ այս ինչ. “ Առւրբ խաչս բարեխաւսէ Դաւիթ եպիսկոպոսին հաւն և ննջեցելոց Թօ Աւ, Աւ, Հո, Տ, Տ վերայ հարաւային որմոց արտաքուստ ի ճակատ խաչ վեմի զրի այս ինչ. , Առւրբ բարեխաւս Պետրում բէկին, Մակասարին, : Մերձ ի հարաւային գուռն եկեղեցւոյն զբեալ կայ

այս ինչ . “Եյս է տապան Դաւիթ վար-  
“դապետին որ փոխեցաւ առ Քրիստոս  
“թավ . Ո՞ ՄՇՆԵ , :


Դրաշակերտ գաւիթն շինեալ կայ ա-  
ռաջի մեծ եկեղեցւոյն՝ համակ սրբատաշ  
քարամբ ի վերայ երկուց սեանց, ունի եր-  
կու դուռն՝ մինն մեծ ընդարձակ առ հա-  
րաւ, միւսն նեղ՝ արևմտեան հիւսիսային  
յանկիւնս ի վեր քան զբարաւարնն . սոյն  
փոքր դրան ի ներքոյ եսաշիմի գրեալ  
կայ այս ինչ դիր . “Ավ քառաթե սուրբ  
“Փրկչին, և զինարան անմահ գառին,  
“աւուր փառաւոր արքային, թվե-  
“ՈՒՃՂԳ , :

Ի յարեւմտեան կամարի արտաքուստ  
հրաշակերտ գաւթի ի յոյժ բարձր տեղ-  
ւոջ ի վեր քան զլուսամուտն զրի սյս  
ինչ ի ներքոյ գեղեցկաքանզակ խաչք .  
“Սուրբ խաչք բարեխաւս Տէր Մովսէսին,  
“Կերսէսին, Յօվսէֆանին և Պարխու-  
“տարին, որք բազում սարով ետուն շե-  
“նել զգաւիթ սուրբ եկեղեցւոյս թավ .  
“ՈՒՃՂԳ , : Ի ներքոյ սորին փակագի-

րըս այս ձեւ ՚ Ե ։ ունի գաւիթս կամարա-  
ձե պատշգամս առաջի հարաւային մեծ  
դրան ի վերայ երկուց սեանց, ուր յամառ-  
նային ժամանակին կատարեն զժամեր-  
գութիւնս . ի վերայ բարաւարի գաւթիս  
մեծ դրան զրի այս արձանազիր . “Ծ Նոր-  
“Հօք Եստուծոյն Եմենակալի կառու-  
“ցաւ ի յանուն Եմենափրկչի վերնատուն  
“և տեղի հոգւոյն ծշմարտի, եկեղեցի  
“սուրբ և գաւթի գովելի ի հայրապետու-  
“թեան . . . շինեցաւ սա ձեռամբ տեա  
“ուըն Կերսէսի հանդերձ միարան հեղ-  
“բարբք ամենայնի ի փրկութիւն մերոց.  
“որք ընդեռանուք յիշեցէք ի Քրիստոս, ա-  
մէն . թավ . ՈՒՃՂԳ , :

Ի վեր քան զբարաւարն արտաքուստ  
գաւթի մեծ դրան զրի այս ինչ . “Տէր  
“հատի(՝) զնեղութիւնս Տէր Մօվսէսի,  
“Կերսէսի, Օսէփանին և Պարխուտարի .  
“ձեզ պահէ անփորձ աշխարհի : ,

Թէսդուրոս . Ո արդապետ Ծ Հրանտի :  
Ի Հանո որբոց թարբեանաց  
Երբ է Խաչուտու



Օ արդ հայութ Մայր եկեղեց-սոն Ան-սոյ.

